

# Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Պր 17



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կար



ՀԱՅԹԱԳԻՏՈՒ  
ՏՈՐԱԳԻՏՈՒ



ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ

ՄԱՐԿԱՐ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ  
ՄԱՐԿԱՐ



ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ



ՄԱՐԿԱՆԱԿԱՆ

ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ



ՄԱՐԿԱՆԱԿԱՆ



ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ






# ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 17 || 26 ԱՊՐԻԼ 1903



## ՇՆԻԿ ԲԱՂԱԴԱԽՈՐ

Գողտրիկ պըտըտիկ՝  
 Խարտեաշ խատուտիկ,  
 Շնիկ բաղդաւոր,  
 Ունիս մէկ աղւոր  
 Տիրուհի քնքուշ՝  
 Աչքերով անուշ.  
 Պարոններ շքեղ՝  
 Գեղուն կամ տգեղ,  
 Նախանձով՝ քանի՛  
 Տան քեզ երանի:  
 Շնիկ դու աղւոր,  
 Նախշուն՝ զիսաւոր,  
 Տիրուհւոյդ մօտիկ  
 Ընես միշտ տիտիկ,  
 Առաքինութեան  
 Նորա պահապան.  
 Խելացի՝ արժուն ,  
 Միշտ պատրաստ ես դուն  
 Ցատկուտել թեթեւ,  
 Կայտուել ի բիւր ծել ,  
 Բծնիլ ոլորուն ,  
 Նորա մէկ նըշան  
 Է քեզ բաւական.  
 Եւ մէկ ականքէն  
 Զգածուիս մէկէն.  
 Եւ նա զուրգուրայ,  
 Դողայ քու վերայ,  
 Մատամբ վարդագոյն  
 Գգուէ քեզ իսկոյն ,  
 Որչա՛փ երջանիկ  
 Ես՝ չքնաղ շնիկ ,  
 Եւ ի՛նչ անձկանօր  
 Կը ցանկան արդեօր՝  
 Շքեղ պարոններ  
 Ըլլալ քեզ ընկեր:



Վա՛յ Թէ ձեռք մ'օտար  
 Յանդգնի յիմար՝  
 Տիրուհւոյդ մէկ Թել՝  
 Մէկ մազը շոյել։  
 Աչքէդ ժայթքես հուր,  
 Ակռայովդ ալ սուր  
 Հարուածես պատժես  
 Զինքն անմիջապէս։  
 Քաջասիրտ՝ ուշիմ  
 Եւ հաւատարիմ  
 Զանիցըդ համար՝  
 Ընդունիս հազար  
 Գրուանք եւ համբոյր՝  
 Շրթամբ վարդաբոյր։  
 Որչա՛փ բազդաւոր  
 Ես՝ շնիկ աղւոր ,  
 Եւ կողկողագին  
 Ինչպէ՛ս փափագին  
 Պարոններ շքեղ  
 Եւ շատ հանճարեղ՝  
 Տիրուհւոյդ սիրուն  
 Կոչուիլ պզտիկ շուն։  
 Մ. ԱձէՄԵԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՂՋԻԳՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

50. — Այն որ խնայել զիսցած չէ

Մեծ քաղաքի մը փողոցին մէջ ծեր կնկան մը հանդիպեցայ , որ ցնցոտիներ հագած կը մուրար : Իր պատմութիւնը հարցուցի : Պատմութիւնը շատ տխուր էր , այնչափ ուրչափ իր յանցանքները խոստովանիլը . նա ինծի պատմեց :

Առանց հարուստ ըլլալու դիւրակեաց է եղեր : Ընտանիքի հոգ չունենալով , միայն իրեն համար կ'աշխատի և լաւ կը վաստկի եղեր : Բայց զարդարանքի փափաք , փայլելու ձգտումը , միայն լաւ բաներ ունելու սովորութիւնը կ'սպառէր բոլոր վաստկածը : Երբէք խորհած չէ խնայել : Մերութիւնը վրայ հասնելով քիչ գործ կը գտնէ , որովհետեւ առաջուան պէս արագ չկրնար աշխատիլ , քիչ քիչ գործը այնպէս կը պակսի , որ այլևս բան մը չունենար աշխատելու : Եւ ճիշդ այն ատեն կ'ըլլայ երբ տկարութիւնը և հիւանդութիւնը իրեն վրայ կը տիրէ : Այն ատեն , կը



սկսի իր թշուառութիւնը շարունակուիլ, ու կը հասնի այն աստիճանին ուր զինք տեսայ:

Դուք այն տարիքին մէջն էք, ուր մարդ կրնայ լաւ խորհիլ: Տղաքս, մտաբերեցէք թէ միշտ երիտասարդ պիտի չմնաք, և թէ թշուառութիւնը ձեր մէջէն այնպիսիներուն կը հետամտի, որ չգիտեն իմաստութեամբ աշխատիլ և համբերութեամբ տնտեսել: Նեղ ժամանակի մէջ, ինչպէս մերը, խնայողութիւնը ընկերական պարտականութիւն մ'է:

51. — Խնայողութեամբ ծերութեան հանգիստը կը պահպանեն

Այնպիսի ժամանակի մը մէջ ենք, որ դրամը դժուար կը վաստակուի եւ ապրուստը սուղ է: Շատ մարդիկ միջոց կը փնտռեն, որ կարենան իրաց այս դառն վիճակը բարւոքել: Բայց, աւա՜ղ, այս միջոցները գտնել և գործադրել դիւրին չէ: — սակայն մէկ միջոց կայ, որ ամէն մարդու ձեռքին տակն է:

Երբ դպրոցէն ելնէք և գործ մը ընտրէք ու ստակ վասակիք, առաջին օրէն մտածեցէք շատ փոքր մաս մը մէկ կողմ դնել, ձեր ծերութեան հանգիստն ապահորելու համար: Պիտի դայ օր մը ուր ձեր յոգնած բազուկները այլ եւս պիտի չծառայեն, այն ատեն ձեր բրած խնայողութիւններովը պիտի ապրիք, առանց ուրիշին վրայ բեռ ըլլալու:

52. — Խնայողութեան արկղ

Լսեցէք, երիտասարդ աղջիկներ, քանի մը ծանօթութիւններ կրնան ձեզ օգտակար լինել. պէտք պիտի ունենաք զանոնք մտաբերել:

Կառավարութիւնը, նախատեսութիւն թելադրելու դիտումով խնայողական երկու արկղ հաստատեց, որոնք շատ օգտակար եղան:

Անոնցմէ մէկին կը յանձնեն խնայուած դրամը: Հոն դրուած գումարը ամէն տարի փոքրիկ շահ մը կը բերէ: Խնայողական ուրիշ արկղ մ'ալ կայ նաև ամէն քանակութեամբ գումարներ 1 Փրանքէն սկսեալ մինչեւ 2000 Փրանք դնել:

Խնայողական միւս արկղը մասնաւորապէս որոշուած է գործաւորներուն ծերութեան ժամանակ փոքր եկամուտ մը ապահովելու համար: Այս կը կոչուի հանգսեան արկղ, հոն դնելով նոյն իսկ ամենափոքր գումարներ այն օրէն երբ սկսին բան մը շահիլ, կրնան շարունակել մինչեւ 50, 55, 60 տարի, անկէ վերջ կարելի է փոքրիկ եկամուտ մը ստանալ, որ մարդ թշուառութենէ կ'ա-



գատէ։ Այսպէսով մարդ այլևս ընկերութեան բեռ չըլլար երբ ծերութիւնը կամ տկարութիւնը անկարող դարձնեն զինք գործելու։ Ահա այսպէսով ծերութեան ժամանակ աշխատութեան եւ լաւ ընթացքի պսուղը կը վայելեն։

53. — Ինչո՞ւ համար խնայողութիւնը պարտականութիւն մըն է

Խնայողութիւնը մեզ համար ոչ միայն օգտակար և շահաւէտ է, այլ և ընկերական պարտականութիւն մըն է։

Ընկերութիւնը մարդոց ժողով մ'է, որ հասարակաց նպատակի մը համար կ'աշխատի և փոխադարձաբար կ'օգնեն իրարու։ Եթէ անոնցմէ մէկը գործ մը չընէր, արդիւնք մ'առաջ չբերեր, բանի պէտք չզգար, ահա այն ատեն ուրիշներու բեռ կ'ըլլայ։

Պէնասէր և շռայլ գործաւորը, որ իր երիտասարդութեան մէջ բան մը խնայած չէ և բոլոր վաստկածը զարդի և սնտոի բաներու մսխած է, ծերութեան ժամանակ ընկերութեան բեռ է, երանի թէ միայն մէկը ըլլար այսպէս վարուող, բայց հարիւրաւոր, հազարաւոր, միլիոնաւոր են, ահա աշխատաւորները սեպուած պիտի ըլլան եղբայրսիրութեան համար պաշտպանել այս թշուառները և թէ մեզմէ իւրաքանչիւրը անոնց աննախատեսութեան և անհոգութեան արդիւնքը պիտի կրէ։

Այն որ կրնայ խնայողութիւն ընել ու չի ընէր ընկերութեան հանդէպ անիրաւութիւն կը գործէ եւ իր անձնական երջանկութիւնը վսանգի կ'ենթարկէ։

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ԲԱՐՈՅԱՎԷՊ

Ն Ե Լ Լ Օ Ն

Ե Ի

Պ Ա Տ Ր Ա Յ Ը

Նելլօն եւ Պատրաշը մէն-մինակ մնացին աշխարհիս երեսին։ Նրանք մտերիմ բարեկամներ էին։ Նելլօն փոքրիկ տղայ էր, իսկ Պատրաշը մեծ չուն։ Թէպէտ երկուսն էլ միեւնոյն տարիքն ունէին՝ բայց մէկը դեռ մանուկ էր, իսկ միւսը արդէն ծերացած։ Նրանք իրանց ամբողջ կեանքը գրեթէ միասին էին անց կացրել և երկուքն էլ ծնողք չունէին, և երկուսին էլ միեւնոյն ձեռքն էլ



կերակրել։ Այսպէս էր սկսուել նրանց ծանօթութիւնները, որ օրէցօր աճելով՝ փոխուեց անկեղծ ու մտերիմ բարեկամութեան։

Նրանք կենում էին գիւղի ծայրին մի խրճիթում, որ շրջապատուած էր ընդարձակ դաշտերով եւ ոսկեգոյն արտերով։ Ամբողջ գիւղը բաղկացած էր մի տասը-քսան տնակներից, մութ-կանաչ ու բաց-կապոյտ փեղկերով եւ ձերմակ ներկուած պատերով, որ ձիւնի նման պսպղում էին արեւին տակ։

Գիւղի մէջտեղում, մամռապատ բլրակի վրայ, կար մի քամու ջաղաց, որ նոր եղած ժամանակ ներկուած է եղել կարմիր գոյնով, իսկ այժմ՝ քամու եւ վատ եղանակների ազդեցութիւնից՝ գոյնը կորցրել էր։ Նա շատ տարօրինակ էր պտոյտ գալիս՝ թւերը մի քիչ պտոյտ էին գալիս՝ մէկ էլ կանգ առնում եւ յետոյ նորից էին սկսում պտոյտ գալ, կարծես ծերութիւնից շուտ-շուտ յոգնում էին։ Չնայելով սրան՝ նա ծառայում էր բոլոր շրջակայ գիւղերին։ Գիւղացիներն այնքան սովոր էին իրենց ջաղացին՝ որքան իրանց հին եկեղեցուն։ Ո՛չ ուրիշ ջաղաց էին գնում ցորեն աղալու, եւ ո՛չ ուրիշ եկեղեցի էին գնում պատարագ տեսնելու։ Եկեղեցին էլ շինուած էր հէնց ջաղացի դիմաց. նա մի հատիկ զանգ ունէր, որ ամէն օր առաւօտեան, ճաշին եւ երեկոյեան զարկում էր եւ տխուր ձայն էր հանում։

Նրա տխուր ձայնը հասնում էր մինչեւ այն խրճիթը, ուր ապրում էին Նելլօն ու Պատրաշը, որոնք իրանց փոքր հասակից սովոր էին այդ ձայնին։

Խրճիթը պատկանում էր խեղճ ծերունի Յովհաննէս Դաասին, որ մի արկածով ոտք վիրաւորեց եւ ամբողջ կեանքում կաղ մնաց։ Երբ ծերուկ Դաասը ութսուն տարին էլ մտել՝ նրա աղջիկը մեռաւ, թողլով երկու տարեկան մի տղայ Նելլօ անունով։ Ծերուկը ինքը պէտք է նրա հոգսը քաշէ, եւ նա իր փոքրիկ թոռնիկին խնամք տանելով՝ շատ սիրեց նրան։ Նրանց խրճիթը հողաշէն էր, գաճով սուղած. նա աղքատ, բայց շատ մաքուր էր. նրա չորս կողմը պարտէզ էր, որ խուսնում էին լուրիա, դդում եւ ուրիշ բանջարեղէններ։

Նրանք շատ եւ շատ աղքատ էին. այնպէս որ յաճախ ուտուելու բան չէին ունենում։ Ծերունին շատ սիրում էր երեխային, որ գեղեցիկ, ազնիւ քնքոյշ բնաւորութիւն ունէր։ Նրանք շատ գոհ էին լինում՝ երբ մի կտոր չոր հաց էին ունենում եւ միայն այն էին խնդրում Աստուծոյ, որ Պատրաշն էլ միշտ իրանց հետ լինի։

Եթէ նա սատկէր կամ հեռանար նրանցից՝ նրանք այդքա չէին կարողանալ ապրել, որովհետեւ ծերունի Դաասը անկարող էր աշ-



խատել, իսկ Նելլօն դեռ եւս փոքր մանուկ էր:

Պատրաշը մի մեծ դեղին շուն էր, ամուր կազմուածքով, երկար ափանջներով, ծուռ ծուռ ոտներով եւ լայն ուժեղ թաթերով, նա այն տեսակ շներէն էր, որոնց մարդիկ բանեցնում են, որոնց աշխատեցնում են քարքարոտ փողոցներում, դանազան գործեր են կատարել տալիս, մինչեւ որ խեղճերը չդիմանալով իրանց ծանր աշխատանքներին՝ վերջ ի վերջոյ սաակում են փողոցներում: Նրա տէր՝ որ մանրավաճառ չարչի էր, կոպիտ, չար, հարբեցող մարդ մի: Նա իր սայլակին բարձում էր ծաղկամաններ, կաթսաներ, դոյլեր եւ կաւէ, թիթեղէ, պղնձէ ուրիշ դանազան առարկաներ: այս բոլորը պարտաւոր էր քաշել խեղճ Պատրաշը, իսկ չարչին իւր սեւ չիբուխը ծխելով՝ անհոգ գնում էր նրա կողքին եւ ճանապարհին ինչքան պանդոկ որ պատահում՝ մտնում էր խմելու:

Բարեբախտաբար ասեմ թէ դժբախտաբար՝ Պատրաշը շատ ուժեղ էր: Նա չէր սատկում, այլ կարողանում էր դիմանալ այս դառն կեանքին: Կրում էր ծանր բեռներ, քաղց եւ ծարաւ, տոթ եւ ցուրտ, ծեծ եւ հայհոյանք: Ամբողջ երկու տարի այսպէս անց կացրեց ծանր աշխատանքի մէջ:

Մի անգամ Պատրաշը դարձեալ քաշում էր իւր սայլակը փոշոտ ձանձրալի ճանապարհով: Ամառային շոգ օդ էր. սայլակը ծանր էր եւ ամբողջապէս բեռնաւորուած էր կաւէ եւ թիթեղէ ամաններով: Տէրը գնում էր շան կողքից եւ երբեմն երբեմն մտրակով խփում էր նրան, որ շուտ շուտ գնայ. յոգնած կենդանին ամէն մի հարուածից ամբողջ մարմնով ցնցուում էր:

Սայլակի ծանրութիւնից, արեւի այրող ճառագայթներից եւ մտրակի հարուածներից խեղճ Պատրաշը ուժասպառ էր եղել: Նա քաղցած ու ծարաւ էր, ամբողջ օր էր, որ ոչ կերել էր, ոչ խմել: Յանկարծ նա տատանուեց՝ վեր ընկաւ եւ բերանին փրփուր երեւաց:

Նա ընկա ծէր սպիտակ, փոշոտ ճանապարհի մէջտեղը, արեւի այրող ճառագայթների տակ: Նա սաստիկ յոգնել էր: Տէրը՝ հայհոյանք էր որ թափում նրա գլխին. զարնում էր ոտով, խփում էր դագանակով. բայց կարծես Պատրաշն այլ եւս չէր զգում ո՛չ նրա հայհոյանքները եւ ոչ հարուածները:

Մանրավաճառը կարծեց թէ շունն արդէն սատկել է եւ անօգուտ են իւր հայհոյանքներն ու փայտի հարուածները, նա յետ արաւ նրա վրայի սարքը, ձգեց նրան խոտերի մէջ եւ փնթփնթալով ու անիծելով՝ սայլակը քաշ տուեց սարն ի վեր, թողնելով սատկող շունը մըջիւնների եւ ագռաւների կերակուր:



Թէպէտ մանրավաճառը Պատրաշին շատ էփան գնով էր ձեռք բերել եւ երկու տարի շարունակ ամառ, ձմեռ, լաւ ու վատ եղանակներին եզան նման աշխատեցրել, բայց այժմ թողեց Պատրաշին եւ հեռացաւ, մտածելով, թէ չարժէ մի սատկող շան համար ժամանակ եւ փող կորցնել:



Բ.

Պատրաշն ընկած էր ձորում խոտերի մէջ: Այդ օրը ամէնքն չտապում էին դէպի տօնավաճառը և Պատրաշի մօտից շատերն էին անցնում թէ՛ ոտով և թէ՛ ձիով. բայց նրանցից ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ, կարծելով թէ սատկած է:



Բայց ահա զուգուած-զարդարուած գիւղացիներից յետոյ անցաւ մի թոյլ ու կաղ ծերունի: Նրա կերպարանքը շատ խղճալի էր. հագին ունէր շատ հին ու մաշուած չոր եւ հագիւ էր շարժըում փոշոտ ճանապարհով: Նա Պատրաշին նկատելով՝ կանգ առաւ եւ զարմացմամբ նայեց իր շուրջը. յետոյ ցած իջաւ դէպի խոտավէտ ձորը եւ կարեկցութեամբ գննեց շունը:

Ծերունու հետ կար եւ մի փոքրիկ տղայ, կարմիր թշերով, սև սև աչքերով, որ թփերի միջից աչքերը շուտ նայում էր խեղճ Պատրաշին:

Այսպէս եղաւ փոքրիկ Նելլօի եւ Պատրաշի առաջին հանդիպումը: Ծերունի Դասսը մեծ դժուարութեամբ հասցրեց այդ թշուառ շունը իւր փոքրիկ խրճիթը: Ծերունին նրան վրայ այնպէս խնամք տարաւ, որ Պատրաշը շատ շուտով կաղդուրուեց եւ կանգնեց իւր հաստ ու ծուռ թաթերի վրայ,

Թէ՛ ծերունին եւ թէ՛ մանուկը շատ սիրով և փաղաքշանքով էին վարւում նրա հետ: Խրճիթի մի անկիւնում յարդից անկողին պատրաստեցին: Նրանք ուշադրութեամբ ահանջ էին դնում նրա շնչառութեանը, կամենալով իմանալ, արդեօք կենդանի՞ է թէ ոչ: Իսկ երբ շունը ոտի կանգնեց եւ առաջին անգամ բարձրաձայն հաջեց՝ նրանք ուրախութիւնից քիչ էր մնում լաց լինէին: Փոքրիկ Նելլօն մեծ հրճուանքով զարդարում էր նրա պարանոցը ծաղկի հիւսակներով եւ համբուրում էր նրա դունչը իր թարմ վարդագոյն շրթունքներով:

(Շարունակելի)

« Ե Ր Կ Ի Ն Ք Է » Ե Ր Կ Ի Ր .

ԱՌԱՋԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

« Դրախան էի, փոքրիկ քերովքէներու մէջ, կը խաղայի, կը « թռչտէի հոն, բարի Աստուած-Պապան կը տեսնէի, իր ներփողը « կ'երգէի, եւ ահա՛ օր մը աղմուկ մը կը լսուի. Երկինքէ-երկիր « բանբեր հրեշտակներն էին որք կըսէին. « Ո՞վ կ'ուզէ երկիր « երթալ »: — Ես, պատասխանեցի ուրիշներու հետ »:

\* \* \*

« Մեր թեւերը կտրեցին:

\* \* \*

« Ապա մեզ բարի-Աստուծոյ քով բերին, եւ նա ըսաւ մեզ.



« Գաղտնիք, սիրտն ազդարհներ, բայց մի՛ մոռնաք խելօք ըլլալ  
« բարի ըլլալ, անորոշման ըլլալ հոն վարը, եթէ կ'ուզէք օր մը  
« դարձեալ հոս ձեր տեղը գրաւել: » Եւ կուռ ու կուշտ համարոյ-  
« ըով մը խօսքերը վերջացուց: »

« Յետոյ այն հրեշտակները որոնք մեզ իրենց փափկիկ թևե-  
« լով վրայ առած էին, կը թռին խնկաւտուած այերաց մէջէն  
« եւ կ'սկսին իջնալ դէպի երկիր. կ'անցնինք լուսաւորներու մէ-  
« ջէն, արեւուն քովէն, լուսնոյն մօտէն, ո՛հ, դիտի՛չ ճամ-  
« բորդութիւն: »

« Հուսկ ուրեմն կը հասնինք ընդարձակ պարտէզ մը, հոն մեզ  
« կը պահեն» մէկերնիս վարդի մը, կամ շուշանի մը. եւ միւսեր-  
« նիս յասմիկներու տակ. իրա՛ւ օդը մի քիչ պաղ էր հոն և հը-  
« րեշտակները փոյթ ունեցան մեզ ծածկելու իրենց թեւերով. ես  
« ըսի իմ խաժաշուի հրեշտակիս. — Մի՛թէ բաւական պիտի մը-  
« նա՞նք հոս:— Ո՛հ, չէ՛, չէ՛, պատասխանեց ան: Բայց ես, ին-  
« չո՛ւ պահեմ ձեզմէ, արդէն սկսած էի զչարիլ բարի Աստուած-  
« Պապային տա՛քուկ գողը թողնելու համար, հոն քանիօ՞ն եր-  
« ջանիկ էր մարդ. ո՛չ ցուրտէն նեղուիլ կար, ո՛չ տաքէն: »

« Իսկոյն պարտիզպանուհւոյն գալը կը լսեմ մէկու մը ընկե-  
« ռակցութեամբ՝ որու կ'ըսէ. « Ձեր ուպածէն չպակսիր հոս, կըր-  
« նաք ընտրել: » Ես կ'իստով չափ կը բանամ շուշանին տերեւները  
« ուր ապաստանած էի, եւ կը տեսնեմ պարտիզպանուհւոյն քովի  
« մարդը բարի եւ գրաւիչ դէմքով: Սա կ'ըսէր, « անանկ մէկը  
« կ'ուզեմ որ շատ հնազանդ, շատ խելօքիկ, միանգամայն շատ  
« ալ անո՞ւշ ըլլայ: » Խօսքը բերանն էր դեռ, զիս նշմարեց եւ  
« յարեց « Աս պիտի առնեմ: » — Շատ լաւ ըսաւ պարտիզպա-  
« նուհին, քիչ յետոյ զայն ձեր տունը պիտի բերեմ: » Եւ տեսայ  
« նաեւ թէ մարդը շատ ստակ համրեց պարտիզպանուհւոյն ձեռ-  
« քին մէջ: ( Կ'երեւայ թէ պէպէ՛ք մը բաւական սուղ կը գնուի,  
« չա՛տ սուղ): Ետքը մարդը կրկնեց, « Մեկնի՛նք: »

Եւ ահա՛ կը մեկնինք, բարի մարդուկը առջեւէն կը քալէր  
ցնծալից, պարտիզպանուհին անոր կը հետեւէր զիս թեւերուն  
վրայ առած. ճամբան ըսի իմ հրեշտակիս « Տեսա՞ր որչափ վճա-  
րեց զիս առնելու համար: » Հրեշտակը պատասխանեց « Տուածը  
բան մը չէ դեռ բազմատոմար վերջէն ծախսելիքին. դուք շատ  
յանցաւոր պիտի ըլլա՛ս եթէ հրութիւնովդ, քաղցրաբարոյութիւ-



նովդ չփոխարինես իր այնչափ զոհողութիւնները » : Հրեշտակին ընդի . « Ո՛հ , այո՛ , շատ սիրուն եւ շատ բարի պիտի ըլլամ » : »

\* \* \*

Հասանք տուն մը՝ ուր ամէնքը ոգեւորութեան մէջ էին մեզ ընդունելու համար . հազիւ դրան շեմին վրայ ոտք կոխեցինք , ձայն մը լսեցի որ կ'ըսէր . « Ահաասի՛կ , ահա՛ , որչափ աղուորիկ է » : Ըսի հրեշտակիս « Այսչափ աղուոր գտածնին ե՛ս եմ՝ արդեօք » : Հրեշտակը ինծի պատասխանեց . « Այո՛ դուն ես , եւ այս ըսողը մեծ մայրիկն է » : Հոն , այն տան մէջ ամէնքը ուրախ էին ծիծաղը կը նշուէր դէմքին վրայ . բայց անկողնին մէջ մանկամարդ կին մը պառկած էր , ցաւատանջ էր այն եւ գունաթափ , կ'երեւայ թէ շատ տառապած էր . « Ինչո՞ւ դեռասի տիկինը այսքան տոգոյն է ըսի » : « Ա՛հ , քու գալուստդ սպասելով երկայնատե՛ն , տառապած է , » յարեց ինձ հրեշտակը :

\* \* \*

Չիս այս կնոջ մօտ դրին , ան ի՛նձ կը նայի այնպէս՝ ինչպէս կը նայէի ես երբեմն բարի Աստուած-Պապային : Ան կը գգուէ զիս այնպէս ինչպէս բարին Աստուած կը գգուէր . կը ճշե՛մ , ո՛հ , երանութիւն . որչա՛փ սէր , ինչ աղապատանք : Հրեշտակը ականջիս կը հծծէ « Կը հաւատամ , մայր մըն է , հիմա՛ կրնամ քեզմէ բաժնուիլ , որովհետեւ քու երկրային հրեշտակդ քովդ է : »

\* \* \*

Եւ հրեշտակը վերադարձաւ երկինք :

Գօնիս

ՏԻՐԱՆ ՊԵՅԼԵՐԵԱՆ



### ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ

Չարիք . — Չարին արմատը սնապարծութիւնն է , այնպէս որ յոռի կիրքերը բաղադրութիւն մ'են հպարտութեան , և առաքինական կիրքերը բաղադրութիւն մը սիրոյ :

Հիւանդութիւն . — Իբրկրատի կենդանութեան՝ դժոխքին մէջ սով կար , կ'ըսէ վերտառութիւնը , մեր արդի Իբրկրատներուն չընորհիւ , այսօր առատութիւն կայ հոն :

Դժբաղդութիւն . — Դժբաղդութիւնը կը գործէ մեր վրայ մեր նկարագրին համեմատ : Մարդ մը պիտի կրնար ազատիլ իր միտքը



բացատրելով՝ բայց չուզելով. ուրիշ մը կը կարծէ խօսելով, դարձնանել ամէն բան, եւ կը կորստի:

Մշտնջենաւորող դժբաղդութիւնը մարդուն հոգւոյն վրայ յառաջ կը բերէ՝ ծերութեան մարմնոյն վրայ ունեցած արդիւնքը. մարդ չկրնար ա՛լ շարժիլ, կը պառկի:

Ուրեք. — Շատ անգամ կրկնուած սուտը՝ ճշմարտութիւն մը կ'ըլլայ. չափաւոր կրնայինք չափազանց կերպով արհամարհել մարդկային կարծիքները:

## Յ Ի Շ Ա Տ Ա Կ

( Ս Ի Բ Ե Ր Գ )

Մութ լսուեցներ, ծաւի լոյսեր ցիրուցան՝  
Յուրս սարսուռով, լոյս-լոյգերով պարուրուած,  
Հրպուստով մը ազդու՝ եկան ու անցան,  
Հուրհոս բոցեր միայն թողլով շրջայած:

Այդ բոցերը փայլեցան հոս մբօսարծարծ,  
Մեր վառ սիրոյն հրնոցին մէջ ոսկեծին,  
Անեացած, խելայեղած յեղակարծ՝  
Պըլլըւեցայ յիշատակիդ առանցքին:

\* \* \*

Անցար գապիր, բայց թողուցիր արիւնող  
Ասղընսուբը Տագնապայոյց լրժումիդ.  
Բոց սերին վերջ՝ լրժումի վիճօքը մըկող:

Զե՛, մի՛ բլլար, անգո՛ւք, այդչափ եսասեր՝  
Սըրսիս ու դեռ չե՛ վարժուած աներկմիս՝  
Մոռացօնքին: Ան չի՛ կրնար սառիլ դեռ:

Մ. Կ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ (1)

(1) Հրատարակելու առթիւ այս քերթուածը՝ չենք կրնար զսպել մեր զարմացումը այն միամտութեան վրայ, որով «Ծաղիկ» ի խմբագրութիւնը իր վերջին թիւին մէջ, կը յայտարարէր թէ, իր Սիրանոյշ Պէրպէրեան աշխատակիցը, ստուգիւ աղջիկ մըն է, մինչդեռ մեզ կը տեղեկացնեն թէ, այդ մտացածին օրիորդը, նոյն ինքն այս բանաստեղծութիւնը ստորագրողն է:

Ի՞նչ զարմանալի բան է որ «Ծաղիկ» ի խմբագրութիւնը առանց որոշապէս ստուգած ըլլալու կ'ենլէ յայտարարելու թէ, այդ Օրիորդ Սիրանոյշ Պէրպէրեանը (°) իրապէս աղջիկ մըն է, մանաւանդ որ, ո՞վ կը հարցնէ իրեն թէ՛ ան աղջիկ է թէ՛ մանչ, Աճապարանքով այդ տեսակ սխալ վճիռներ արժակելու տեղ, խոհեմութիւնը միշտ խմբագրութեան մը համար համեստ ծելով օգտակար եւ գեղեցիկը ընել, քան թէ անգոյ բաներով պարծիլ եւ ուրախանալ. Ի. Խ.



## ՇՈՐԵՊԻՆԴ ՄԵՆԱՄԱՐՏ ՄԸ

Ամէն շնորհ գիտէ այս պատմութիւնը՝ սակայն ոչ ոք տեղեակ է անոր մանրամասնութիւններուն, ոչ ալ սկզբնապատճառին։ Երբ խմբագիր մը տալիք լուր մը չգտներ, երբ թուղթը ճերմակ կը մնայ իր առջեւ և երեւակայութիւնը չի գործեր, այն տեն կը բանայ հին հաւաքածոյները, մենամարտիս պատմութիւնը կը գտնէ, ծայրը «Նիւ-Եորքէն մեզ կը գրեն» մը կ'աւելցնէ և գրաշարին յանձնելով կ'երթայ հանդարտ սրտով ճաշելու։ Յաջորդ օրը թերթին բաժանորդը կը կարգայ այս դէպքը և բարեկամական ժպիտ մը կ'ունենայ անոր հեղինակին համար։ Ասանկով խմբագիր ու ընթերցող գոհ կը մնան։

Մտածեցի որ եթէ մենամարտիս պատճառը և մանրագէտները նկարագրեմ, խմբագիրները ամէն անգամուան համար 40-50 տող աւելի բան կ'ունենան պատրաստ, իսկ ընթերցողներն ալ նոր բան մը կարդացած կ'ըլլան, փոխանակ միեւնոյն պատմութեան հարիւր քսան և եօթերորդ տպագրութիւնովը գլուխ ուռեցնելու։

Հակառակորդիս անունը պարզապէս Թոմ Թոմսըն էր, ու Ամերիկայի մեքենավարներէն ամէնէն յանդուգն էր — եւ առանց նախանձոտութեան՝ կրնամ աւելցնել թէ իր փեսան աշխարհիս մէջ մէկ հատիկ մեքենավարն էր, ասիկա հաստատողը Թոմ Թոմսըն է — Այդ փեսան ալ, Տիկնայք և Տեարք, ես եմ։ Առանց կեղծ համեստութեան, ինչպէս և առանց սին մեծամտութեան՝ կրնամ հաւատացնել ձեզ թէ Թոմսըն չէր սխալէր իր դատողութեան մէջ։

Թոմ Թոմսըն՝ աներս ըլլալէ առաջ սոսկալի տգեղ մարդ մըն էր. չհասկնաք թէ ան ծերանալովը և իմ ալ անոր փեսան ըլլալովս՝ զայն աւելի գեղեցիկ կը գտնեմ. ո՛չ. երեսուն եւ հինգերորդ ծառուղիին և շրջակայներուն մէջ ամէն մարդ գիտէ թէ կնոջս հայրը Թոմսըններուն ամէնէն տգեղն է — և Աստուած գիտէ թէ անոնց մէջ ինչ հրէշները կան — և սակայն իմ ընտանիքին մէջ մտնելէս ի վեր երես ելլելիք դէմք մը ունի ան։

Բնութիւնը երկայն ծնօտ մը պարզեւած էր իրեն, երկայն, երկայն, ու լերկ, սեխի մը պէս անմազ։ Եւ դէմքին ստորին տնդամին այս երկարութենէն զատ անոր ծայրը՝ ճիշտ մէջտեղէն կը ցցուէր լայն, սեւ, մազոտ ու իւղոտ կոճիժ մը որ շարժուն



ալ էր և իր տիրոջը զգացումներուն համաձայն ասդին անդին կը տատանէր:

Եւ սոսկալին՝ կարելի չէր թոմարնի երեսը նայիլ առանց իւրնդալէ մարելու: Փաքիր մը եթէ անոր դէմը ելլէր՝ գէթ ժամ մը կուշտերը պիտի սեղմէր չի ճաթելու համար խնդալէ, նոյն իսկ Պրահմա իր բոլոր աստուածութիւնովը չպիտի դիմանար անոր շարժող կոծիծին: Բնաւ մտքէս չպիտի ելլէ առաջին հանդիպումս իրեն հետ Հրտսընի փողոցին մէջ՝ մեծափառ փորը ցըցած, շարժուն կոծիծը օդին մէջ տնկած էլէն աղջկանը թեւը՝ ժուռ կուգար սալայատակին վրայ:

Մի զարմանաք երբ ըսեմ թէ էլէն հրեշտակի պէս գեղեցիկ էր, և բնականաբար այս գոյգը տեսնելուս պէս առաջին ակնարկըս նէրա վրայ սեւեռեցաւ: չէի գիտեր թէ խնդուքն ու զուարթութիւնը հօրը երեսին վրայ նկարուած էին: Բայց երբ աչքերս դարձուցի այդ երկրորդ ընկերին վրայ, հազիւ կրցայ ինքզինքս բռնել՝ խնդալէս գիտենը չգլորելու համար:

— Թօմ, Թոմսըն, Թոմ, Թոմսընն ես դուն: Հա՛, հա՛, հա՛, Թօմ, Թոմսըն, հա՛, հա՛, հա՛, յիսուն տողար գրաւք կը դնեմ որ Թօմ, Թոմսընն ես դուն: Ո՛ւֆ, հա՛, հա՛, հա՛, ո՛ւֆ, աս ասանկ խնդալու չէի: Թօմ, Թոմսընն ես դուն, հա՛, հա՛, հա՛:

Եւ սակայն առաջուրնէ ինծի ըսուած էր ասիկա: Երկաթուղիի գործանոցներուն մէջ, կայարաններուն մէջ, վայրաշարժերու վրայ, Թօմ, Թոմսընի ծնօտն ու կոծիծը առածի տեղ անցած էին: Դժբաղդաբար իրեն այցելած փողոցին մէջ ոչ ոք տեղեակ էր ատոր, և երբ անցորդները խնդալէ մարմնրիւ տեսնէ՝ կարծեցին թէ խելքիս դպել է, բայց ես միշտ «Թօմ, Թոմսընն ես դուն» կը պօռայի և ձեռքովս թուշը կը ցուցնէի. ասանկ որ ամէնուն ուշադրութիւնը դէպի հոն դարձաւ:

Կրնամ բսել թէ նոյն նահապետին տապանը մտնելէն ի վեր ասանկ քրքիչ, ասանկ խնդուք տեսնուած չէ աշխարհիս վրայ: Ամբոխին քահքահներէն ու իմ աղաղակներէս շուարած՝ խեղճ Թօմ անմեղ դէմք մը առնել կը ջանար՝ այլայլութիւնը ձածկելու համար. սակայն քանի ինքզինքը զսպելու կ'աշխատէր, այնքան ծնօտին կոծիծը նորանոր շարժումներ կ'ընէր և ամբոխին խնդալու վայնասունը երթալով կ'աւելնար. շատերը ստիպուած էին գետինը նստելու՝ որովհետեւ կայնելու կարողութիւնը չէր մնացեր վրանին:

Բայց ամէն բանի վախճան մը կայ, ու այնպէս ալ Թոմի համբերութիւնը հասաւ. չորս դին գննելէ ետքը թէ որո՞ւ վրայ թափելու է իր բարկութիւնը. արդէն դիմացս կեցեր էր, սոսկալի



բռնեցք մը վեր վերցուց և հարուածը տալու վրայ էր երբ գլուխս ծռեցի, գլխարկս վար գլորեցաւ ու կռնակս կեցողի մը դէմքը կարմրեցաւ արիւնլուայ:

Այս պահուն խնդուքի աղաղակները՝ մոլեգնութեան աստիճանին հասան, ամբողջ թաղին բնակիչները կարծես կապուելիք խենդեր դարձեր էին, շատերը՝ ալ չդիմանալով կը ձգէին կը փախչէին:

Հոս պէտք է պզտիկ բացատրութիւն մը մը տամ. քաներկու տարեկանէս ի վեր — այս դիպուածին ատեն 27 տարեկան էի — սոսկալի ճաղատութեան մը զոհ գացած էի. մաղերս չէ թէ մէկիկ մէկիկ՝ օրական հազարներով կը թափէին, և քանի կը քիչնային՝ գանկիս վրայ կը բռններ ուռեցք մը որ երթալով կը մեծնար եւ տաքօրինակ ձեւեր կ'առնէր: Գործածած կեղծամս՝ ժամանակակիցներուս աչքէն կը ծածկէր այս այտուցը և կը կարծէի թէ մարդ տեղեակ չէ անոր գոյութեան: Բայց Թոմսընի կռուփի հարուածը գետին ձգելով գլխարկս ու կեղծամս, նոր տեսարան մը բացուեցաւ խնդացող ամբոխին: Հակառակորդս՝ բարկութիւնը մոռնալով քահքահ մը ձգեց եւ մատովը՝ այտուցս ցուցնելով « Ուիլեմ Թրէնչն ես դուն » պօռալ սկսաւ:

Հիմայ հասկցայ որ իմ այտուցս ալ Թոմսընի կոծիծին չափ համբաւաւոր է եղեր, քանի որ առանց իրար տեսած ըլլալու, առաջին դիպուածով՝ կրցաւ անունս տալ: Ահա ասոր համար քրքիչները կը կրկնապատկուէին:

Բ.

Բայց ես Թոմսընի չափ համբերող ու զուարթամիտ չէի, երբ տեսայ որ ուրիշին ընելիք կատակս ինծի դէմ կը դառնայ՝ սոսկալի կերպով բարկացայ ու քանի մը կռուփի հարուածներ սկսայ ցանել չորս կողմս: Բազմութիւնը առջի բերան խնդաց բարկութեանս վրայ, բայց տեսնելով որ ձեռքս ծանր է, զուարթութենէ նեղսրտութեան անցաւ ու լաւ դաս մը տալու վրայ էր ինծի երբ Թոմսըն քովս գալով ձեռքը ուսիս վրայ դրաւ:

— Տիկնայք եւ Տեարք, պօռաց, այս մարդը իմն է: Կը կարծէ թէ զինքը նախատած ենք, և աջ ու ձախ հարուածներ կուտայ. արդ, միեւնոյն կերպով ես ալ նախատուեցայ եւ ուղղակի իր կողմէ. ուրեմն խնդիրը երկուքնուս միայն վերաբերելուն համար մեր մէջը կարգադրելու ենք. ուստի կը խնդրեմ որ չդպչիք իրեն որպէսզի իբր հակառակորդ առողջ մարդ մը ունենամ եւ չէ թէ փետուրները թափած հաւ մը:

Թոմի այս բանախօսութիւնը մեծ ընդունելութիւն գտաւ:

— Իրաւունք ունի՛, իրաւունք ունի՛, կը պօռար ամբոխը:



հուրրա՝ թոմ թոմսըն, հուրրա՝ կոծիծը, հուրրա՝ ծնօտը, հի՛բ, հի՛բ, հուրրա՝ կոծիծը:

Մտքէս չէի անցներ թէ իրաւ ինծի հետ մենամարտիլ կ'ուզէ թոմսըն. հապա կարծեցի թէ կեանքս ամբոխին ձեռքէն ազատելու համար է որ այս խօսքը մէջտեղ կը նետէ, ուստի պօռացի:

— Կ'ընդունիմ, գինետուն մը երթանք և պայմաններուն վրայ խօսինք:

Ամբոխը կամաց կամաց ցրուեցաւ, էլէնը պանդոկ ղրկեցինք և երկուքնիս գինետուն մտանք. իբր քաղաքավար մարդ՝ խմելիքը ես կ'ապսպրէի, եւ ա՛յնքան խմեցինք, այնքան խմեցինք, որ թօմսըն լոլիկ դարձած մոռցաւ թէ կեանքս ազատած է, եւ մենամարտի համար ըրած խօսքերը յիշելով յարեց:

— Ա՛խ, տղաս, անանկ մենամարտ մը կ'ուզեմ որու վրայ հարկը տարի խօսին:

— Թօմ, պատասխանեցի, ես փնտռած մարդդ եմ:

— Այո՛, նոր բան մը հնարենք, դիւցազնական բան մը. Հըստսրնի մէջ լողալով կռուինք, մէյմէկ դաշոյնով զինուած. կը հասկընա՞ն:

— Ազուոր բան կ'ըլլայ այդ, բայց գործնական չէ. դէմ դիմաց եզերքներէն ջուրը պիտի նետուինք, եւ մինչեւ որ իրարու քով հասնինք ոյժերնիս պիտի կտրի. սա ալ նկատի առնենք որ հոսանքին վերի կողմը գտնուողը՝ հակառակորդին վրայ մեծ առաւելութիւն մը պիտի ունենայ:

— Իրաւունք ունիս, տղաս, ազնուասիրտ պոյ մըն ես. Ուրիշ բան մը նայինք:

Եւ սկսանք նորէն խմել, այն աստիճանի որ թօմ խորհելու կարողութիւնը բոլորովին կորսնցուց. իսկ ես քանի մը գաղափար ծրագրելէս ետքը, յանկարծ նոր բան մը ինկաւ միտքս:

— Թօմ, գոչեցի, թօմ, ես գտայ, ալ մի՛ փնտռեր:

— Գտա՞ր, հարցուց խօսակիցս գլուխը շիտակ բռնել ջանալով, աստիկա գիտունի բառ մըն է, նայինք ի՞նչ գտար:

— Մտի՛կ ըրէ. օր մը թօմ թօմսըն առանց մէկուն բան մը ըսելու մեքենան պիտի հեծնայ եւ վաշինկիթօնէ ճամբայ ելլէ. Ուրիշեամ ալ՝ իր մեքենայովը Նիւ Իօրքէն պիտի մեկնի. երկուքն ալ միեւնոյն երկաթեայ գծին վրայ պիտի գտնուին եւ կրցածնուն չափ մեքենաները արագցնեն մինչեւ որ իրարու գարնուելով երկուքն ալ կտոր կտոր ըլլան:

— Սքանչելի՛ է, մրմռաց թօմ՝ գաւաթ մըն ալ խմելով. գաղափարդ հիանալի է: Վաղը չէ միւս օր պիտի գործադրենք զայն:

(Շար.)

Թարգմ. ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



## ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

## « ԼՐ ՍԷՏՐԻՔ »

Ուայթ Սթար շոգենաւային ընկերութեան Լը Սէսթիք շոգենաւը Լիվըրքուլ հասաւ ապրիլի սկիզբները, որկէ կը մեկնի Նիւ-Եօրք երթալու համար։ Աշխարհիս ամէնէն մեծ շոգենաւն է այս, թէև ոչ երկայն, որովհետեւ Քայգեր Վիլմէլմ Բ.ը իրմէ 2 մէթր աւելի երկայն է, եւ Լ'Օսեանիքը 1 մէթր 20. բայց ապրանքի ու ճամբորդի տարողութեան մասին անհաւասարելի է։

Դեռ քիչ ատեն առաջ երեք յարկ ունեցող նաւերը իբր խոշոր կը նկատուէին. ի՛նչ պիտի ըսէք հապա Լը Սէսթիքի՝ որ ինը յարկ ունի միայն ճամբորդներու սենեակներուն յատկացուած։ Իններորդէն վար կը գտնուին ապրանքի ու ածուխի մթերանոցները, մեքենաներու սրահները, հնոցները եւայլն։ Ծխնելոյզներուն իւրաքանչիւրին տրամագիծը 4 մէթր 20 է։ Լօնտօնի մէջ գետնի տակէ ելեքտրական թրամուէյ մը կայ. եթէ չեմ սխալիր այդ գետնուղիին պատերը միեւնոյն տրամագծով փորուած են։ Սէսթիքի շինութեան մէջ մտնող երկաթի կտորներուն մէկ քանիները 50 թոնոնոց միակտուր երկաթէ են, առանց հաշուելու շոգենաւին կողերը ծածկող երկաթէ տախտակները որոնց իւրաքանչիւրը 3 թոնօ է։ Ամէն մէկ դամ 2 օխայէն պակաս չէ։

Սէսթիքը շինող ճարտարագէտները՝ անոր սրընթացութենէն աւելի հոգ տարած են շատ բեռով ճամբորդ առնելու եւ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ ապրանք փոխադրելու յարմար շոգենաւ մը ձեռք բերել, ասով փոխադրութեան գինը շատ աւելի կ'աժննայ։ Այսու հանդերձ միջին արագութիւնը պիտի ըլլայ 22 հանգոյց. այսինքն սովորական շոգենաւներուն արագութեան պէս բան մը, եւ գուցէ քիչ մըն ալ աւելի։ Կողերուն մէջ ծածկուած մեքենաներուն հաւաքական ոյժը 30 հազար ձիու զօրութեան կը հաւասարի։

Այս շոգենաւ անցեալ տարի Օգոստ. 21ին ծով իջուցուեցաւ Պէլֆաութի մէջ (Իրլանտա)։ Գրեթէ 18 հազար թօնօ տարողութիւն ունի։ Ճամբորդներու բաժինին յատկացուած սենեակներու կարգադրութիւնը այնքան հիանալի կերպով զարդարուած է, որ մեծ մայրաքաղաքներու կանոնաւոր պանդոկներուն չափ հանգըտութիւն կ'ընծայեն ուղեւորին։ Ննջատենեակները՝ սովորական շոգենաւներու պէս փոխանակ կարգ կարգ անկողիններ պարու-



նակելու՝ ամէն սենեակ մէկ կախեալ անկողին միայն ունի։ Շոգեհեռաւին բոլոր կողմերը անոյշ ջուրի ծորակներ կը գտնուին։ բոլոր սենեակները քառակուսի մեծ պատուհաններով կը լուսաւորուին։ Առաջին կարգի ճամբորդներու ճաշասրահը հիանալի կերպով զարդարուած է եւ կրնայ հանգիստ կերպով 300 հոգի պարունակել։ Ասկէ զատ կը գտնուին ուրիշ ճաշասրահներ ալ, խոհանոցներ, ընթերցասրահներ, գրադարաններ, ծխարաններ ևլն։

Ինչպէս ըսինք վերը, Սէրիֆ 18 հազար թօնօ ապրանք կրնայ առնել։ Ամէն կերպով հանգիստ ընելու պայմանաւ 2935 մարդ կրնայ կրել, որոնց 350ը Ա. կարգի ճամբորդ, 250ը Բ. կարգի, 2000ը Գ. կարգի եւ 335 ալիբր նաւագ կը ծառայեն։ Մինակ մեքենաները կառավարելու եւ հսկելու համար 92 հոգի պէտք է։

Գաղափար մը տալու համար այս հսկայ շոգեհեռաւին մեծութեան վրայ, բազդատուութեան դնենք զայն Լօնտօնի մէկ հրկունշանաւոր եւ ամէնէն մեծ շէնքերուն հետ, որոնց ընդարձակութեան վրայ քիչ շատ ամէն մարդ բան մը գիտէ։ Ենթադրեցէք որ Սէրիֆը տանին Սուրբ Պօղոսի մայր եկեղեցիին քովը կայնեցընեն։ Եկեղեցիին վրայ ամէնէն բարձր գտնուող խաչը 122 մէթր բարձրութիւն մը ունի։ Արդ, շոգեհեռաւին ծածքը անկէ 88 մէթր աւելի եւս վեր պիտի ցցուեր։ Անգլիոյ մէջ ամենէն մեծ եկեղեցին Ուինչէսթրի մայր եկեղեցին է, 168 մէթր երկայնութիւն ունի, մինչդեռ Սէրիֆ 210 մէթր հասակ մը ունի։ Նաւը եկեղեցիին մէջ մտցնելու համար 30 մէթր յառաջակողմէն եւ 42 մէթր ալ խելաց կողմէն կտրելու է որ սղմի։

ՁԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

### ՀԵՂՈՒԿՆԵՐՈՒ ԽՏՈՒԹԻՒՆԸ

Ամէն մարմին, պաղելով կը կծկուի, ծաւալը կը պզտիկնայ, կը խտանայ եւ տեսակարար ծանրութիւնը կը շատնայ։ Զուրը զարմանալի բացառութիւն մը կազմէ այս ընդհանուր օրէնքէն։ Քանի՜ տարութիւնը քիչնայ, ջուրը կը կծկուի՝ միւս բոլոր մարմիններուն պէս, սակայն երբ իր բարեխառնութիւնը 4 աստիճանի հասնի, ո՛չ միայն այլ եւս ծաւալը (պզտիկնար) հապա այդ աստիճանէն վար բարեխառնութիւններուն մէջ կ'սկսի ընդարձակուիլ, աւելի շատ տեղ բռնել ու խտութիւնը կը նուազի։ Ըսել է ջուրը 4 աստիճան բարեխառնութեան մէջ իր ամէնէն պզտիկ ծաւալը եւ հետեւաբար խտութեան ամէնէն բարձր աստիճանը կ'ստանայ։


Զուրին այս յատկութիւնը ապացուցանելու համար գիտունները շատ մը զործիրներ հնարած են՝ կնճռոտ ու փափուկ։ Մենք ալ կրնանք առանց ծախքի ու ամենապարզ միջոցով մէկ միեւնոյն փորձը կատարել, ունենալով միայն ջրով լեցուն ասպակեայ աման մը (զավանդ) եւ մէջը պարպուած հակկիթի ամ-



բողջ կճէպ մը: Ըսենք նախապէս թէ՛ ձմեռուան մէջ աւելի դիւրին եւ առանց ծախքի կրնանք կատարել, մինչդեռ ամառը սառնոյցի պէտք պիտի ունենանք եւ ան ալ ծախքի կարօտ է:

Տաք սենեակի մը մէջ ամանով ջուրը պահելէ ետքը, անանկ որ ջուրին բարեխառնութիւնը բաւական բարձր ըլլայ ( $10^{\circ}$  է վեր), մէջն դրէք պարապ հաւկիթի կճէպը, որու ծակերը մեղրամոմով գոցուած է եւ տակէն կապարի կտորներ կախուած են՝ հաւկիթը ծանրացնելու եւ ջուրին տակը պահելու համար: Անհրաժեշտ է որ հաւկիթը բնաւ ամանին յատակին չդպչի եւ կախուած ծանրութիւնը կարելի եղածին չափ թեթեւ ըլլայ:

Հիմա ամանով ջուրը դրէք պատուհանէն դուրս, արտաքին ջուրտի ազդեցութեան տակ ջուրը կը պաղի եւ հետեւաբար խտութիւնը կ'աւելնայ հեղուկին կծկելովը, կը տեսնէք որ հաւկիթը կամաց կամաց վեր կ'ելլէ եւ կը հասնի կէտի մը վրայ՝ որ ալ կանգ կ'առնէ, երբ այդ միջոցին՝ սնդիկը գէրօէն



վեր 4րդ աստիճանին առջեւ կանգ պիտի առնէ: Բիշ ժամանակ ետքը, ջուրին տաքութիւնը կ'իջնայ մինչեւ գէրօ կամ անկէ ալ վար օդին ցրտութեան համեմատ այն ատեն ամանին մէջի ջուրը իր ծաւալը կ'ընդարձակէ, եւ հաւկիթը կ'սկսի վար իջնել ղէպի ամանին յատակը:

Հիմա, ապակիէ ամանը ներս առէք եւ առանց հաւկիթին ձեռք դպցնելու կրակին մօտ դրէք. ջուրը տաքնալով՝ բարեխառնութիւնը պիտի բարձրանայ, հաւկիթն ալ կամաց կամաց նորէն վեր պիտի ելլէ եւ երբ կանգ առնէ, ջերմաչափ մը դրէք ջուրին մէջը՝ սնդիկը նորէն  $40^{\circ}$  ին վրայ կանգ կ'առնէ, յետոյ քանի ջուրը տաքնայ, հաւկիթը վար իջնել կ'սկսի՝ մինչեւ ամանին յատակը՝ ճիշդ փորձը սկսած ժամանակնիդ ունեցած դիւրին մէջ:

Խօսքերնիս ամփոփելով՝ տեսանք որ ջուրը ըլլայ թէ  $10^{\circ}$  էն մինչեւ  $40^{\circ}$  պաղելով, ըլլայ թէն մինչեւ  $40^{\circ}$  տաքնալով՝ միշտ հաւկիթը վեր կը բարձրանայ ջուրին խտութեան աւելնալուն պատճառաւ եւ կանգ կ'առնէ երբ հեղուկին բարեխառնութիւնը ճիշդ  $40^{\circ}$ ի հասնի:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ 12ԴԴ ԹԻԻԻՆ ՄԷՋ ՏՐՈՒԱԾ ՄՏԱՄԱՐՋԱՅԻՆ  
ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. — Հաւերուն կերած հատիկները ծամուելու են որ մարտուն, բայց հաւերը աւելայ չունենալով՝ բնական բերմամբ քարի կտորներ կը կլլեն, որոնք հատիկներուն հետ խառնուելով կը ձգմեն զանոնք:


2. — Հովիւը վաճառականէն աւելի հաշուագէտ է եղեր: Մինչեւ 12րդ ոչխարը՝ վաճառականը զուարթ էր, է՛ն է՛ն բարձր գինը 51 ղշ. էր, խնդալը կտրեցաւ 14րդ ոչխարին. մտմտուքը առաւ 20րդին, 13107 ղշ. մէկ ոչխարը: 25րդին՝ խենդենալը բան մը չէր, 449430 ղշ. հատը: 30րդին՝ իր ամբողջ հարստութիւնն ալ եթէ վրայ տար՝ չէր կրնար ազատիլ. մինակ ոչխար մը կ'արժէր՝ 10921773 ղշ:

3. — ԱՐՁԱԳԱՆԳ,

4. — ՊԱՐԱՊ, ՏԱԲԱՏ, ԿԱՏԱԿ, ԲԱՐԱԲ (կկոց),

Սոյն հարցումներուն պատասխանեցին՝ Պ. Սարգիս եւ օրիորդ Մաքրունի Ղազարոսեան՝ Նիկովիդիա. — Պ. Պ. Վահրամ Կ. Պալքըճեան, եւ Կարապետ Մ. Մանուկեան, աշակ. Պէրպէրեան վարժարանին: — Համբարձում Կիւլէսէրեան՝ Եփրատ գօլէճ՝ Խարթերդ. — Ստեփան Քէշիշեան:

13րդ քիւիճ հարցումներու պատասխանները



1. —

2. — Գինովին գրաւը.

|          |   |        |   |            |   |       |     |
|----------|---|--------|---|------------|---|-------|-----|
| Ա.ը առաւ | 3 | լեցուն | 1 | կէս լեցուն | 3 | պարապ | չիշ |
| Բ.ը »    | 3 | »      | 1 | »          | 3 | »     | »   |
| Գ.ը »    | 1 | »      | 5 | »          | 1 | »     | »   |

3. — Նկարհանելուկ:

2 եւ 3րդ հարցումները ճիշդ լուծեցին՝ Պ. Պ. Ա. Սէֆէրեան, Բերա. — Աստուր՝ Ռոտոսեօ. — Արամ Տօքթ. Շիրինեան. — Հրայեայ Փ. Եռասուփեան: Օր. Մաքրունի Ղազարոսեան՝ Նիկովիդիա:



14րդ քիւին հաւցումներուն պատասխանները

1. Ճաշողներէն մին՝ մէկուն հայրն էր եւ միւսին տղան, որով երկու հոգիի տեղը բռնած էր ինք. մեծ-հայր, տղայ եւ թոռ էին այս մարդիկը:

2. — Կայծքարը խիստ կարծր է. պողպատէն ամենափոքր կտոր մը կը փրթի, եւ պարնուած ժամանակ տաքութիւնը այնչափ կ'աւելնայ որ հրաշեկ կ'ըլլայ:

3. —  $2+2=2\times 2$

4. — Ճամբայ:

5. — Ա լ ի ք

Լ ա ր

Ի ը

ք

6. — Նարկիէ

### Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

1. — Ի՞նչ մունեսիկներ են անոնք, որ մեզի լուր կը բերեն, բայց բերան չունին, քեւ երես ունին՝ աչք չունին, ականջ չունին, բայց գլուխ ունին, շատ տեղեր կ'երթան. քեւ բո՛ւ չունին. հին բաներով կը շինուին՝ նոր բաներու նման մեզ կուգան. համբաւն չեն գիտեր, բայց շատ բաներ կը համբեն, մանաւանդ համբ են. եւ ոմանք յիշաւի համբ են:

2. — Աշխարհիս ո՞ր կողմն է այն. որ իրեն պէս շատեր մարդու բերնին մեջ պարունակելէ ետք՝ տեղ ալ կ'աւելնայ:

3. — Ո՞վ է հնարած շոգեման եւ լուսաւորութեան կազմ:

3. — Ինչո՞ւ համար կրակը երկար ատեն կը դիմանայ՝ երբ վրան մոխիր ցանենք:

Քանի մը տեղերէ, ուր գործակալ չունինք, Հանրագիտակի բաժանորդագրուողներ կան ուղղակի Խմբագրութեանս գիմելով եւ քիչ օրէն վճարելու խոստումով: Միմիայն իրենց խոստման վստահելով մինչեւ այսօր թերթերը շրջեցինք իրենց հասցէին: Տարեշրջանի չորրորդ ամիսը բոլորելու վրայ ըլլալով կը խնդրենք այս Մեծ. Բաժանորդներէն որ իրենց խոստումը կատարելու ժամանակը եկած համարին եւ մեզի ստիպել չտան թերթին առաքումը դադարեցնելու հարկին մէջ գտնուիլ:

ԽՄԱԳԻՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԷՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ  
Կ.ՍՍ.Ն. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պատը Ալի ճատտէսի, Խիւ 33, Իգտամ լրագրին դէմ



## 48 48

1875

பெரியகோட்டை அரங்கம்

1940

1. 3. 1971

1891. 1892. 1893. 1894. 1895. 1896. 1897. 1898. 1899. 1900. 1901. 1902. 1903. 1904. 1905. 1906. 1907. 1908. 1909. 1910. 1911. 1912. 1913. 1914. 1915. 1916. 1917. 1918. 1919. 1920. 1921. 1922. 1923. 1924. 1925. 1926. 1927. 1928. 1929. 1930. 1931. 1932. 1933. 1934. 1935. 1936. 1937. 1938. 1939. 1940. 1941. 1942. 1943. 1944. 1945. 1946. 1947. 1948. 1949. 1950. 1951. 1952. 1953. 1954. 1955. 1956. 1957. 1958. 1959. 1960. 1961. 1962. 1963. 1964. 1965. 1966. 1967. 1968. 1969. 1970. 1971. 1972. 1973. 1974. 1975. 1976. 1977. 1978. 1979. 1980. 1981. 1982. 1983. 1984. 1985. 1986. 1987. 1988. 1989. 1990. 1991. 1992. 1993. 1994. 1995. 1996. 1997. 1998. 1999. 2000. 2001. 2002. 2003. 2004. 2005. 2006. 2007. 2008. 2009. 2010. 2011. 2012. 2013. 2014. 2015. 2016. 2017. 2018. 2019. 2020. 2021. 2022. 2023. 2024. 2025. 2026. 2027. 2028. 2029. 2030. 2031. 2032. 2033. 2034. 2035. 2036. 2037. 2038. 2039. 2040. 2041. 2042. 2043. 2044. 2045. 2046. 2047. 2048. 2049. 2050. 2051. 2052. 2053. 2054. 2055. 2056. 2057. 2058. 2059. 2060. 2061. 2062. 2063. 2064. 2065. 2066. 2067. 2068. 2069. 2070. 2071. 2072. 2073. 2074. 2075. 2076. 2077. 2078. 2079. 2080. 2081. 2082. 2083. 2084. 2085. 2086. 2087. 2088. 2089. 2090. 2091. 2092. 2093. 2094. 2095. 2096. 2097. 2098. 2099. 2100. 2101. 2102. 2103. 2104. 2105. 2106. 2107. 2108. 2109. 2110. 2111. 2112. 2113. 2114. 2115. 2116. 2117. 2118. 2119. 2120. 2121. 2122. 2123. 2124. 2125. 2126. 2127. 2128. 2129. 2130. 2131. 2132. 2133. 2134. 2135. 2136. 2137. 2138. 2139. 2140. 2141. 2142. 2143. 2144. 2145. 2146. 2147. 2148. 2149. 2150. 2151. 2152. 2153. 2154. 2155. 2156. 2157. 2158. 2159. 2160. 2161. 2162. 2163. 2164. 2165. 2166. 2167. 2168. 2169. 2170. 2171. 2172. 2173. 2174. 2175. 2176. 2177. 2178. 2179. 2180. 2181. 2182. 2183. 2184. 2185. 2186. 2187. 2188. 2189. 2190. 2191. 2192. 2193. 2194. 2195. 2196. 2197. 2198. 2199. 2200. 2201. 2202. 2203. 2204. 2205. 2206. 2207. 2208. 2209. 2210. 2211. 2212. 2213. 2214. 2215. 2216. 2217. 2218. 2219. 2220. 2221. 2222. 2223. 2224. 2225. 2226. 2227. 2228. 2229. 2230. 2231. 2232. 2233. 2234. 2235. 2236. 2237. 2238. 2239. 2240. 2241. 2242. 2243. 2244. 2245. 2246. 2247. 2248. 2249. 2250. 2251. 2252. 2253. 2254. 2255. 2256. 2257. 2258. 2259. 2260. 2261. 2262. 2263. 2264. 2265. 2266. 2267. 2268. 2269. 2270. 2271. 2272. 2273. 2274. 2275. 2276. 2277. 2278. 2279. 2280. 2281. 2282. 2283. 2284. 2285. 2286. 2287. 2288. 2289. 2290. 2291. 2292. 2293. 2294. 2295. 2296. 2297. 2298. 2299. 2300. 2301. 2302. 2303. 2304. 2305. 2306. 2307. 2308. 2309. 2310. 2311. 2312. 2313. 2314. 2315. 2316. 2317. 2318. 2319. 2320. 2321. 2322. 2323. 2324. 2325. 2326. 2327. 2328. 2329. 2330. 2331. 2332. 2333. 2334. 2335. 2336. 2337. 2338. 2339. 2340. 2341. 2342. 2343. 2344. 2345. 2346. 2347. 2348. 2349. 2350. 2351. 2352. 2353. 2354. 2355. 2356. 2357. 2358. 2359. 2360. 2361. 2362. 2363. 2364. 2365. 2366. 2367. 2368. 2369. 2370. 2371. 2372. 2373. 2374. 2375. 2376. 2377. 2378. 2379. 2380. 2381. 2382. 2383. 2384. 2385. 2386. 2387. 2388. 2389. 2390. 2391. 2392. 2393. 2394. 2395. 2396. 2397. 2398. 2399. 2400. 2401. 2402. 2403. 2404. 2405. 2406. 2407. 2408. 2409. 2410. 2411. 2412. 2413. 2414. 2415. 2416. 2417. 2418. 2419. 2420. 2421. 2422. 2423. 2424. 2425. 2426. 2427. 2428. 2429. 2430. 2431. 2432. 2433. 2434. 2435. 2436. 2437. 2438. 2439. 2440. 2441. 2442. 2443. 2444. 2445. 2446. 2447. 2448. 2449. 2450. 2451. 2452. 2453. 2454. 2455. 2456. 2457. 2458. 2459. 2460. 2461. 2462. 2463. 2464. 2465. 2466. 2467. 2468. 2469. 2470. 2471. 2472. 2473. 2474. 2475. 2476. 2477. 2478. 2479. 2480. 2481. 2482. 2483. 2484. 2485. 2486. 2487. 2488. 2489. 2490. 2491. 2492. 2493. 2494. 2495. 2496. 2497. 2498. 2499. 2500. 2501. 2502. 2503. 2504. 2505. 2506. 2507. 2508. 2509. 2510. 2511. 2512. 2513. 2514. 2515. 2516. 2517. 2518. 2519. 2520. 2521. 2522. 2523. 2524. 2525. 2526. 2527. 2528. 2529. 2530. 2531. 2532. 2533. 2534. 2535. 2536. 2537. 2538. 2539. 2540. 2541. 2542. 2543. 2544. 2545. 2546. 2547. 2548. 2549. 2550. 2551. 2552. 2553. 2554. 2555. 2556. 2557. 2558. 2559. 2560. 2561. 2562. 2563. 2564. 2565. 2566. 2567. 2568. 2569. 2570. 2571. 2572. 25



# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԹԱՔԱԿԱՆ

## ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վստառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ Վստառականացի 12 տետր զաւստանել ուզողը պէտք է վճարէ 12 շրուշ:

## ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Պանդամուր  
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպաղեան  
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան  
Դոնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրքէրեան  
Ներսիս, Պաշիկ էֆ. Գ. Թաշճեան  
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման  
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան  
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան  
Էրպա'ա, Կարապետ էֆ. Գոճաեան  
Թեփրսալ, Ասատուր էֆ. Արսէնեան  
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան  
Կեսաբիա, Երուանդ էֆ. Երկաթեան  
Կիւրիւն, Գրիգոր Մ. էֆ. Պանդամուր  
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան  
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան  
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան  
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս ԲԷ. Շահինեան  
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան  
Նիկոսիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան  
Պարսիգալ, Ստեփան էֆ. Մակարեան  
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքաբոլեան  
Սրվալ, Մանուկ էֆ. Պէլլէրեան  
Սիւ հաճի Բէօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան  
Վեզիր Բէօրիւ » »  
Տիւրքիսի, Լեւոն էֆ. Սրապեան  
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրք և կամ մանր յանձնարարութիւններու լոկաւորէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոշմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քահիլէս ընել): Նամակադրոշմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը հասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: